Հաշվետվություն

Գործուղման Արդյունքների Մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Հրանտ Ներսիսյան , ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի միջուկային անվտանգության վարչության համակարգերի և կոմպոնենտների բաժնի չափող-հսկող սարքերի և ավտոմատացման գլխավոր պետական տեսուչ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ք. Պլզեն, Չեխիայի Հանրապետություն, 2026 թվականի մարտի 23-ից մարտի 31-ը ներառյալ:

3. **Հրավիրող կողմը.**

   SKODA JS a.s c ընկերություն:

4. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի հզորության ավտոմատ կարգավորման համակարգի (APM) և հզորության սահմանափակման կարգավորման համակարգի (POM) գործարանային ստուգման և փորձարկման աշխատանքներին:

5. **Քննարկված թեմաները**

   Գործուղման ընթացքում իրականացվել է APM և POM համակարգերի գործարանային ստուգումների և փորձարկումների հետևյալ ծավալը՝ համաձայն ստուգումների և փորձարկումների ծրագրերի և մեթոդիկաների.

   - APM և POM համակարգերի սարքավորումների և ծրագրային ապահովման համապատասխանության ստուգումը, դրանց փոխգործակցությունը, բեռնման և կոնֆիգուրացիայի ճշտությունը:
   - Էլեկտրամատակարարման սխեմաների, պահուստային սնուցման և էներգամատակարարման ճիշտ աշխատանքի փորձարկումը POM համակարգում:
   - Էլեկտրամատակարարման սխեմաների, պահուստային սնուցման և էներգամատակարարման ճիշտ աշխատանքի փորձարկումը APM համակարգում:

- APM համակարգի տվյալների փոխանակման, կառավարման տրամաբանության և ինտերֆեյսների ստուգում:
- POM համակարգի հիմնական ֆունկցիաների փորձարկումը՝ նորմալ աշխատանքային պայմանների մոդելավորմամբ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման ընթացքում կայացել են հանդիպումներ SKODA JS a.s c ընկերության, ZAT փորձագիտական կազմակերպության, ինչպես նաև Հունգարիայի Հանրապետության «Պակշ» ատոմակայանի (որտեղ SKODA JS a.s c ընկերությունը արդեն ներդրել է նմանատիպ APM և POM համակարգերը) ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում SKODA JS a.s c ընկերության, ZAT փորձագիտական կազմակերպությունների հետ քննարկվել են փորձարկումների անցկացման ընթացակարգերը:

Հունգարիայի Հանրապետության «Պակշ» ատոմակայանի ներկայացուցիչների հետ քննարկվել են APM և POM համակարգերի շահագործման առանձնահատկությունները և փորձը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Գործուղման ընթացքում կայացել է APM և POM համակարգերի պրոյեկտի տեխնիկական պահանջներին համապատասխան ստուգումները և փորձարկումները արդյունքների արձանագրությունների ստորագրում ՀԱԷԿ-ի և SKODA JS a.s c կազմակերպության միջև:

ՀՀ ՄԱԿ կոմիտեի ներկայացուցչի կողմից որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկություններ չկան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հրանտ Ներսիսյան

09.04.2026 թ.